

## ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոս՝ կենսաբանական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Ս.Խ. Պիպոյանի

Լյուբով Վալերիի Բայանի Գ.00.08 - «Կենդանաբանություն. մակարոնաբանություն. էկոլոգիա»  
մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման «Սևանա լճի ավազանի և Արաքս գետի հովտի ջրլող և ափամերձ թռչնաֆաունայի  
տարածաժամանակային վերաբաշխումը՝ կապված Սևանա լճի ջրի մակարդակի  
փոփոխության հետ» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Լյուբով Վալերիի Բայանի կողմից պաշտպանության ներկայացրած Սևանա լճի  
ավազանի և Արաքս գետի հովտի ջրլող և ափամերձ թռչնաֆաունայի տարածաժամանակային  
վերաբաշխումը՝ կապված Սևանա լճի ջրի մակարդակի փոփոխության հետ» թեմայով  
ատենախոսությունը նվիրված է Սևանա լճի ավազանում և Արաքս գետի հովտում տարածված  
ջրլող ու ափամերձ թռչունների թվաքանակի երկարաժամկետ դինամիկայի և տարածական-  
ժամանակային բաշխման հետազոտմանը՝ կապված Սևանա լճում ջրի մակարդակի (անկում և  
բարձրացում) փոփոխության հետ: Հայաստանի Հանրապետության տարածքում ներկայում  
գրանցված շուրջ 370 տեսակ թռչուններից ջրլող կամ ափամերձ են համարվում 128-ը, որոնք  
պատկանում են սուզակակերպերի, սուզահավերի, թիառտավորների, ձկնկուլանմանների,  
արագիլակերպերի, կռունկակերպերի, քարադրակերպերի, ֆլամիգոյակերպերի կարգերին:  
Այս թռչունները ջրային էկոհամակարգերի կարևոր բաղադրիչներ են՝ կազմելով սննդային  
շղթաների էական մասը՝ անմիջական ազդեցություն ունենալով էկոհամակարգերի  
կայունության վրա: Միաժամանակ, հաշվի առնելով, որ ջրլող և ափամերձ թռչունների մեծ  
մասը չվող թռչուններ են ու անմիջականորեն կախված են նաև ջրաճահճային տարածքների  
առկայությունից, ապա նրանց գլխաքանակի և պոպուլյացիաների դինամիկայի վերաբերյալ  
տեղեկատվությունը կարող է արժեքավոր պատկերացում տալ ջրային ռեսուրսների ինչպես  
լոկալ, այնպես էլ էկոհամակարգային մասշտաբներով: Այս ամենն արդիական է դարձնում Լ.  
Բայանի կողմից 2000-2024 թթ. ընթացքում կատարված հետազոտությունները, որոնց  
նպատակն է եղել ուսումնասիրել Սևանա լճի ավազանում և Արաքս գետի հովտում  
տարածված ջրլող ու ափամերձ թռչունների տեսակային կազմը, նրանց թվաքանակի  
երկարաժամկետ դինամիկան և տարածական-ժամանակային բաշխումը՝ կապված Սևանա  
լճում ջրի մակարդակի փոփոխության հետ: Այդ նպատակին հասնելու համար ատենախոսն  
իր առջև դրել է մի շարք խնդիրներ, որոնցից են՝

- Կատարել ջրլող և ափամերձ թռչունների պոպուլյացիաների տեսակային  
բազմազանության փոփոխությունների վերլուծություն 1920-2024 թվականների համար, որոնք  
կապված են Սևանա լճի ջրի մակարդակի տատանումների և Արաքստյան դաշտում լճակային  
ձկնաբուծարանների ստեղծման հետ:

- Ուսումնասիրել ջրլող և ավիամերձ թռչնաշխարհի վիճակը 2000-2024 թվականների համար:

- Գնահատել ջրլող և ավիամերձ թռչունների պոպուլյացիաների սեզոնային դինամիկան և բացահայտել նրանց ժամանակային ու տարածական բաշխման օրինաչափությունները:

- Ցուցիչ տեսակների հիման վրա որոշել շրջակա միջավայրի (կլիմայական, հիդրոլոգիական) և մարդածին գործոնների ազդեցությունը Սևանա լճի ավազանում և Արարատյան դաշտում ջրլող ու ավիամերձ թռչունների գլխաքանակի, տեսակային կազմի և տարածական բաշխվածության վրա:

- Հավաքված տվյալների հիման վրա գնահատել ջրային տարածքների պիտանիությունը ջրլող թռչունների համար և կանխատեսել դրանց բաշխումը Սևանա լճի ավազանում և Արարատյան դաշտում:

- Գնահատել առանձին տեսակների պահպանության կարգավիճակը՝ ՀՀ կենդանիների Կարմիր գրքում նրանց ներառման կամ այդտեղից հանելու առաջարկությունների համար:

Ատենախոսությունը ներկայացված է համակարգչային շարվածքով՝ 146 էջի վրա: Այն կազմված է ներածությունից, վեց գլխից, վերջաբանից, եզրակացություններից, 140 անուն պարունակող գրականության ցանկից: Աշխատանքն ընդգրկում է 35 նկար (լուսանկարներ, գծապատկերներ, քարտեզներ) և 21 աղյուսակ: Բացի դրանցից, աշխատանքին կցված է նաև հավելված, որտեղ ներառված են 1 աղյուսակ և 34 նկար:

Ատենախոսության առաջին գլխում (ատենախոսության 10-ից 29 էջեր) գրական աղբյուրների հիման վրա ատենախոսը ներկայացնում է տեղեկություններ Հայաստանի ջրլող և ավիամերձ թռչնաշխարհի ուսումնասիրության պատմության մասին, ինչպես նաև հակիրճ անդրադառնում է ուսումնասիրվող տարածքների ֆիզիկաքիմիական բնութագրին, մասնավորապես Սևանա լճի ծագման, ջրաբանության, լճի ավազանի կլիմայի, հողային ծածկույթի ու բուսականության առանձնահատկություններին: Նմանապես անդրադարձ է կատարվել Արարատյան դաշտի ջրակալների, մասնավորապես ձկնային տնտեսությունների և Արաքս գետի ջրաբանական առանձնահատկություններին:

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է ուսումնասիրված նյութին և ուսումնասիրությունների մեթոդներին: Այս գլուխը (ատենախոսության 30-36 էջեր) կարևոր նշանակություն ունի Լ.Բայյանի հետազոտությունների արդյունքները գնահատելու համար: Այստեղ ատենախոսը նշում է, որ հետազոտությունները կատարվել 2000-2024թթ. ընթացքում՝ ընդհանուր 12000 կմ<sup>2</sup> զբաղեցնող տարածքում, որից շուրջ 10000 կմ<sup>2</sup> Սևանա լճի առափնյա շրջանում, իսկ 1500 կմ<sup>2</sup> Արարատյան դաշտում: Այստեղ հարկ է նշել, որ ողջ Գեղարունիքի մարզը ընդհանուր զբաղեցնում է 5348 կմ<sup>2</sup> տարածք (Հարությունյան, 2003), ինչը մոտ 2 անգամ փոքր է ատենախոսի կողմից բերված տարածքի թվային մակերեսից: Հավանաբար այստեղ ատենախոսի անուշադրության պատճառով գրառման վրիպակ է տեղի ունեցել: Այնուհետև Լ. Բայյանը մանրամասնորեն անդրադառնում է հետազոտության նյութի ձեռք բերմանը և դրա ուսումնասիրման համար կիրառված միջազգայնորեն ընդունված տարբեր, այդ թվում նաև

վիճակագրական մեթոդների նկարագրմանը: Այս գլխի վերջում աստենախոսն անդրադառնում է թոչնաբանության մեջ օգտագործվող եզրույթաբանական (տերմինոլոգիական) մի շարք հարցերի, նշելով, թե ինչ է պետք հասկանալ ջրլող և ավամերձ թռչուններ ասելով, միաժամանակ նշելով, որ թռչունների կարգաբանության մեջ պարբերաբար տեղի են ունենում փոփոխություններ և դրանց հաշվառմամբ ներկայում ուսումնասիրվող տարածքներում ըստ հեղինակի ներկայացմամբ հանդիպում է 8 կարգի և 18 ընտանիքի պատկանող 120 տեսակ թռչուն:

Աստենախոսության երրորդ գլուխը նվիրված է Սևանա լճի ավազանի և Արարատյան դաշտի ջրաճահճային թռչնաշխարհի տեսակային կազմի և տարածական կառուցվածքի վերլուծությանը 1920-2000 թթ. ընթացքում (37-49 էջեր): Այս գլխում աստենախոսը գրական աղբյուրների ու դրանց համեմատական վերլուծության հիման վրա ցույց է տալիս, որ Սևանա լճի ավազանում մարդածին գործոնները բացասաբար են ազդել ջրլող և ավամերձ թռչունների ֆաունայի վրա՝ զրկելով նրանց իրենց հիմնական բնադրավայրերից: Միաժամանակ, Արարատյան դաշտում վերոնշյալ գործոնները ոչ միայն վերստեղծել են ջրլող և ավամերձ թռչունների բնադրման բնակավայրեր, այլև ստեղծել են նոր, միգրացիաների հարմար պայմաններ այնպիսի ջրլող թռչունների համար, որոնք նախկինում չեն եղել Հայաստանում ուսումնասիրության ողջ ժամանակահատվածում, դրանով փոխելով ջրլող և ավամերձ թռչունների ռեսուրսների բաշխումը հանրապետությունում:

Աստենախոսության չորրորդ գլուխը նվիրված է Սևանա լճի ավազանում և Արաքս գետի հովտում ջրաճահճային թռչունների ֆաունայի դինամիկային (տեսակների բազմազանություն, բնակավայրեր, քանակ) 2000-2024 թվականների համար: Այստեղ Լ. Բայանը սեփական մանրակրկիտ դիտարկումների արդյունքում տարվա բոլոր եղանակների և ամիսների համար ներկայացնում է բնադրող և չբնադրող, նստակյաց և չվող ջրաճահճային թռչունների տեսակային կազմը, այդ թռչունների քանակական փոփոխությունների ցուցանիշները 5, 10 և 21 տարիների կտրվածքով, ինչպես նաև ներկայացնում է ջրլող և ավամերձ թռչունների տարածական բաշխումը Սևանա լճի ավազանում և Արարատյան դաշտում 2000–2024 թվականների համար:

Աստենախոսության հինգերորդ գլուխը նվիրված է Սևանա լճի և Արաքս գետի հովտի ջրաճահճային թռչունների ֆաունայի համեմատական վերլուծությանը 100 տարվա ընթացքում (1920–2024 թթ.): Բացի այդ, այս գլխում աստենախոսն անդրադառնում է նաև ջրլող և ավամերձ թռչունների պահպանության հարցերին:

Աստենախոսության վեցերորդ գլուխը նվիրված է Սևանա լճի ավազանում և Արարատյան դաշտում հանդիպող ջրլող և ավամերձ թռչունների բաշխման և թվաքանակի վրա ազդող գործոնների բացահայտմանը: Ըստ աստենախոսի, այդ գործոններից են կլիմայական փոփոխությունները (հիմնականում ջերմաստիճանը) և մարդածին ազդեցությունը (ջրի մակարդակի տատանումները Սևանա լճում, ստորերկրյա ջրերի գերշահագործումը, թռչունների անհանգստացումը Սևանա լճում ձկան որսի ընթացքում,

որսորդների և որսագողերի ազդեցությունը Արարատյան դաշտում, թռչունների բնակավայրերի կառուցվածքային փոփոխությունը՝ ավազահանքեր, գյուղատնտեսական հանդակներ, այլն):

Ատենախոսության վերջաբանը հակիրճ ամփոփում է նախորդ գլուխների բովանդակությունը:

### Ատենախոսության գիտական և կիրառական նշանակությունը

Ատենախոսության եզրակացությունները համապատասխանում են աշխատանքի նպատակին, իսկ դրված խնդիրների լուծման բովանդակությունը սեփական դիտարկումների ու վերլուծությունների հիման վրա տրված է ինչպես ատենախոսության տարբեր գլուխներում և ենթագլուխներում, այնպես էլ ամփոփման մեջ և եզրակացություններում:

Ատենախոսությունը շարադրված է գրագետ ռուսերենով, իսկ նրա սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Հրապարակումները համապատասխանում են ՀՀ ԲԿԳԿ-ի պահանջներին և արտացոլում են ատենախոսության հիմնադրույթները:

Ինչպես բոլոր լայնածավալ գիտական աշխատանքները, քննարկվող ատենախոսությունը նույնպես զերծ չէ որոշ վրիպումներից, որոնցից կարելի է նշել հետևյալները.

1. Ատենախոսության առաջին գլխում առանց գրական հղումների նշում է, որ ձկնային տնտեսությունները սնող ջրանցքներում հանդիպում է ասիական (չինական) կարասը *Carassius auratus* և սովորական սպիտակաձուկը *Alburnus alburnus*: Հարկ է նշել, որ այդ տեսակները Հայաստանի տարածքում չեն հանդիպում, իսկ դրանց փոխարեն այստեղ ի թիվս այլ ձկնատեսակների հանդիպում են արծաթափայլ կարասը *Carassius gibelio* և անդրկովկասյան սպիտակաձուկը *Alburnus hohenackeri* (Пипоян, 2012; Պիպոյան 2021):

2. Ատենախոսության չորրորդ գլխում նկար 19-ի (էջ 81) մեկնաբանությունը լիարժեք ձևակերպված չէ, իսկ ջրլող թռչունների տոկոսային հարաբերակցությունը 2020-21 թթ. համար վիճակագրորեն թերի է:

3. Ատենախոսության երրորդ գլխի բովանդակությունը (Սևանա լճի ավազանի և Արարատյան դաշտի ջրաճահճային թռչնաշխարհի կազմն ու տարածական կառուցվածքը 1920 թ. մինչև 2000 թ.) ցանկալի էր քննարկվեր ատենախոսության հինգերորդ գլխում, քանի որ այստեղ նույնպես ներառնված է Սևանա լճի ավազանի և Արարատյան դաշտի ջրաճահճային թռչնաշխարհի համեմատական վերլուծությունը վերոնշյալ թվականների համար: Արդյունքում ատենախոսության երրորդ գլուխն արդեն կլիներ սեփական հետազոտությունների արդյունքների մասին:

4. Ատենախոսության հինգերորդ գլխում նշված է, որ Սևանա լճի ավազանում և Արարատյան դաշտում հանդիպում է ջրլող և ավազանի թռչունների 118 տեսակ, որոնք

պատկանում են 8 կարգի և 19 ընտանիքի, այն դեպքում երբ ատենախոսության երկրորդ գլխում նշված է 120 տեսակ և 18 ընտանիք: Միաժամանակ հավելվածի աղյուսակում ներկայացված է 122 տեսակ:

5. Ատենախոսության տարբեր գլուխներում ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող թռչուններին տարբեր եզրույթներ են տրվում՝ «ջրլող և ավիամերձ թռչուններ» և «ջրաճահճային թռչուններ»: Ցանկալի է, որ նշված եզրույթներից որևէ մեկն օգտագործվեր ողջ աշխատանքում:

Ամփոփելով վերոգրյալը, կարելի է եզրակացնել, որ կատարված դիտողությունները չունեն սկզբունքային բնույթ և չեն կարող որևէ կերպ ազդել կատարված աշխատանքի որակի վրա:

Այսպիսով, քննարկվող ատենախոսությունն արդիականությամբ, փաստացի նյութի ծավալով, բովանդակությամբ, գիտական և գործնական նշանակությամբ համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող «ՀՀ-ում գիտական աստիճանի շնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Լյուբով Վալերիի Բալյանն արժանի է կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը::

Պաշտոնական ընդդիմախոս,  
Կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ս.Բ. Պիպոյան

Կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Բ. Պիպոյանի ստորագրությունը հաստատում եմ՝  
Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական  
համալսարանի գիտական քարտուղար



Հ. Թաղևոսյան

16.01.2026թ.